

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ**

**COMMUNICATIONS, NOTES
ET DISCUSSIONS**

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐԸ¹ «ԴՐՈՇԱԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

¶

«Ռոշակ» պարբերականը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգանն էր։ Հիմնադիրն էր նշանաւոր դաշնակցական գործիչ Քրիստովափոր Միքայէլեանը (1859-1905)։ Պարբերականում շատ հետաքրքիր նիւթեր էին տպագրւում նույիրուած Հայոց հիմնախնդիրներին, նոյնպէս էլ իտալիայի միաւորման ժամանակաշրջանի կարեւոր դէպքերին։

Եւրոպայի հայ ուսանողական միութիւնը 1899-ին եւ 1901-ին նամակներով ժնեւից դիմում է երկու նշանաւոր գարիբալդիականների՝ Ռիչչոտտի Գարիբալդիին (1847-1924), (որ իտալիայի ազգային հերոս Ջուզեպպէ Գարիբալդիի կրտսեր որդին էր, ռազմական գործիչ, մասնակցութիւն էր ունեցել իտալական ազատագրական շարժման գրեթէ բոլոր ճակատամարտերին), եւ Ամիլկարէ Ջիպրիանիին (1844-1918), (վերջինս նոյնպէս իտալացի նշանաւոր զօրավար էր, իտալիայի ազատագրումից յետոյ խորհրդարանի անդամ), նրանց կարծիքներն իմանալու հայոց դատի պաշտպանութեան վերաբերեալ։ Նամակները գրուել են Արդուլ Համիդ սուլթանի 1894-1896 կազմակերպած հայկական ջարդերից յետոյ։

Իտալացի հերոսները դրականօրէն պատասխանել են հայ ուսանողներին։ Այն իր արտացոլումն էր գտնում, թուով երեք նամակներում։ Եթէ առաջին երկու նամակները՝ գրուել են 1899ին, ապա Ամիլկարէ Ջիպրիանիի «Հայերը» խորագրով վերջին նամակը գրուել է 1901ին։ Ինչ հարցեր էին առաջ քաշւում այդ նամակներում ժամանակի մեծագոյն զօրավարների կողմից։

Առաջին ամենագլխաւոր հարցը, որով նրանք ոգեւորում էին հայ ուսանող երիտասարդներին, գտնում էին, որ ոչ մի

1 Հեղինակը նոյն թեմայով գեկուցում է կարդացել Օշականում՝ 5 Հոկտեմբեր 2008ին, նույիրուած Վազգէն Ա. Հայրապետի ծմբեան 100ամեակին։

խաղաղութեան վեհաժողով չի կարող լուծել հայ ժողովրդի ազատագրութեան հարցը: Նրանց կարծիքով այդ հարցի միակ լուծումն է լաց ու կոծը թողնել, համախմբուել եւ գէնքը ձեռքներին կուռել Օսմանեան բռնապետութիւնից ազատագրուելու համար: Իսկ եթէ հայերը տուեալ դէպքում չունեն ռազմական գերազանց զօրավարներ, ապա այդ դէպքում, վերջիններս պատրաստ են իրենց զօրավարական տաղանդով օգնելու հայ ժողովրդին: Այդ նամակը հրատարակուել է «Լա պտիտ Ռէքիւրիկ»ի մէջ: «Ազատ ըլլալ ուզող ժողովուրդ մը քող կազմակերպուի, - գրում էր Ա. Զիպրիանին՝ Երոպայում ապրող հայ երիտասարդներին դաւադրէ, շարժի, պայքարի. ստրկութենէ ախորժող մարդն է որ կ'աղերսէ, կու լայ, կ'աղաչէ»²: Բերում է փոքրիկ Կրետէ կղզու օրինակը, որտեղ ինքը անձամբ կոռուել է, եւ դրա շնորհիւ կղզին ազատագրուել է թուրքական լծից: Այդ դէպքում հերոսը գտնում է, որ Զեր Աստուածը պէտք է լինի քաջութիւնը, յանդգնութիւնը, ատելութիւնը եւ կեանքից չյուսահատուելը: Միայն այս պայմաններից յետոյ ժողովուրդը կարող է ազատագրուել: Ա. Զիպրիանին կոչ է անում հայերին: «Կամ մեռնիլ հերոսի պէս գէնքը ափին, կռուելով, կամ մեռնիլ անարի եւ վատասիրտ, համակերպ ու լալկան»³: Արդեօք նման պայմաններում հայերը կարող էին ընդունել Ա. Զիպրիանիի դասը: Ո՞չ ամենեւին, քանի որ նշանաւոր զօրավարը, որքան էլ յարգում եւ սիրում էր հայերին, սակայն նրա կոչերն աւելի զգացմունքային բնոյթ էին կրում: Նամակներում արծարծուող հարցերը չվերածուեցին գործնական քայլերի: Բայց պահպանուած փաստաթուղթը հետաքրքրական է իր բնոյթով, որտեղ արտայայտուել էին հայերին օգնելու երկու մեծ իտալացիների ցանկութիւնը:

1907 Զուգեպահէ Գարիբալդիի ծննդեան 100ամեայ յորելեանի առիթով «Դրօշակը» (1907 Յունիս-Յուլիս, թիւ 6-7 եւ թիւ 8) տպագրել է երկու յօդուած, իմաստաւորելով Գարիբալդիի կեանքը եւ գործունէութիւնը: Յօդուածում նշլում էր, որ Զուգեպահէ Գարիբալդիին իր հայրենասիրական գործունէութեամբ «քրոլոր ժողովուրդներու հիացումին արժանացած էր»: Հեղինակը գովերգում է իտալական մեծերին Վիտտորիո-Ֆմանուէլէ Երկրորդին, կոմս Քաւուրին, Զուգեպահէ Գարիբալդիին: Այդ երեքը հայրենասէր մարդիկ էին, որոնք իտալիայի ազատութիւնը եւ միութիւնը «հրաշակերտեցին»: Շարունակելով զարգացնել իր միտքը,

2 «Դրօշակ», 1901, թիւ 9, էջ 149:

3 Անդ, էջ 150:

յօդուածագիրը նկատում է. «Վիտտորիո-Էմմանուելէ՝ հայրենասէր Վեհապետը եւ յենակէտը միութեան, Քաւուր՝ խորհող գլուխը եւ զուգորդութիւններու նարապիկ դիւանագէտը, եւ Գարիբալդի՝ զինուորը, ժէստը, անսպառ եռանդը, որ սուր մը դրաւ ազատութեան ափին մէջ»⁴: Հեղինակը գտնում է, որ «Գրել Գարիբալդի կենսագրութիւնը, գրել ըսել է ժամանակակից Խոալիայի ազատութեան պատմութիւնը»⁵: Քննարկելով Ձուգեպակ Գարիբալդիի գործունէութիւնը, հեղինակը ինչ-որ տեղ գերազնահատում է նրա գերը Խոալիայի ազատագրման գործում, որ «դիւցազնավէպի» է նմանւում: Յոյց է տալիս նաեւ, որ իր գործունէութեան սկզբում Գարիբալդին միայն եւ միայն Փիէմոնտէիշ՝ թագաւորի հրամանն է կատարում, նրա գործիքն էր: Միաժամանակ քննադատում է Զ. Գարիբալդիին այն բանի համար, որ «Գարիբալդի աննման երսակապես մըն էր, թէեւ ոչ լաւ կազմակերպիչ»⁶:

«Դրօշակի» յօդուածագիրն այնուամենայնիւ գծագրելով Գարիբալդիի անմահ կերպարը այն ճիշտ եզրակացութեան է գալիս, որ «Գարիբալդի ազգային իդէալի մարմնացումը եղաւ եւ մինչեւ վերջ վառ պահեց Խոալիոյ ազգային ոգին»⁷: Յօդուածագիրն ընդգծում է հերոսի հայրենասէր եւ ազգային գործիչ լինելը, նույիրուածութիւնը իր հայրենիքին ու ազգին, մաքուր եւ առաքինի անձնաւորութիւնը միայն կարող էր նման գործերով օժտուած լինել: Այս դրուատանքները համահունչ էին «Դրօշակ» պարբերականի տեսակէտներին, որի համար էլ տպագրում էր նման նիւթեր: Պարբերականն, այնուամենայնիւ, Զ. Գարիբալդիի կերպարն օրինակ էր ծառայեցնում հայ ժողովրդի ազատագրական շարժման հայրենասէր գործիչների համար:

Հայկական դատի պաշտպանութեան հարցին է նույիրուած նաեւ «Դրօշակում» տպագրուած Վիտտորիո Դի Օլիւէրիի «Հայկական հարցը եւ Խոալիոյ պարտականութիւնը» (1906 թիւ 4) յօդուածը: Հեղինակը հայ դատի ջերմ պաշտպաններից ու բարեկամներից մէկն է, նա ցանկութիւն է յայտնել տեսնելու հայոց հարցի շուտափոյթ լուծումը:

Պարբերականը մի փոքր ներածական է գրել այս առիթով: Ինչպէս երեւում է յօդուածի հեղինակը՝ որոշ դրդապատճառնե-

4 Անդ, 1907, N 6-7, էջ 96:

5 Անդ:

6 Անդ, թիւ 8, էջ 117:

7 Անդ, թիւ 8, էջ 119:

րից ելնելով, հանդէս է եկել կեղծանուամբ: Եւրոպական երկրներից, որը կարող էր նպաստել հայոց դատի շուտափոյթ լուծմանը, Ֆրանսիան, չի կարող օգնել հայերին, քանի որ նա Մարոկկոյի մօտից (Վերջինս գտնւում էր Փրանսիական տիրապետութեան ներքոյ) աշխատում էր Միջերկրական ծովի ելքը փակել եւ Գերմանիային չժողնել մուտք գործել այնտեղ:

Անգլիան էլ չի կարող օգնել հայերին, քանի որ այս գերտէրութիւնը վիճելի հարցեր ունի Հիւսիսային եւ Բալթիկ ծովերի միջեւ, ինչպէս նաեւ Զիբրալֆարի նեղուցում, որտեղ բախւում են անգլո-գերմանական շահերը: Հետեւապէս, միակ եւրոպական երկիրը Խտալիան է, որ միաւորումից յետոյ ազատ ու անկախ է: Վերջինս շահագրգռուած պէտք է լինի Բալկանեան եւ Փոքր Ասիայի ու մասնաւորապէս Հայաստանի ճակատագրով, եւ եթէ ուզենար՝ այդ գործին միջամտելու ցանկութիւն:

«Բայց, նաեւ աւելի ազնիւ եւ աւելի քարձր պատճառներով, - գրում է յօդուածագիրը - Խտալիան է, որ պէտք է առաջին տեղը բռնէ հայանպաստ պայքարի մէջ: Հայաստամը, ինչպէս Խտալիան, բարձր լեռներու եւ արգասաւոր դաշտերու երկիր մըն է, ան ալ կը գտնուի այն նամրուն վրայ ուրկէ կ'անցնին էն կարեւոր առեւտրական փոխանակութիւնները, եւ ինչպէս Խտալիան, եղած է եւ է դեռ ամենաայլազան ժողովուրդներու փառասիրութեան առարկան. ան ալ պայքարած է իր անկախութեան համար եւ անոր պատմութեան մէջ քաղաքակրթութեան հոյակապ էջեր կան»⁸:

Հեղինակը մէկ անգամ եւս բացայատում է, որ դարերի ընթացքում Հայաստանը հազար անգամ բաժան-բաժան է եղել: Նոյն բախտին էր նախկինում՝ ԺԹ. դարում արժանացել Խտալիան, որ նոյն դարի կէսին գտնւում էր մասնատուած վիճակում եւ կրում էր Աւստրիայի լուծը: Սակայն, պայքարի գնով, Խտալիան թօթափեց դարաւոր լուծը եւ երկրում սկսուեց խաղաղութիւն եւ առաջադիմութիւն: Ներկայումս Խտալիան իր հերթին պէտք է օգնի իր բախստկիցներին՝ հայերին եւ մակեդոնացիներին: Եւ վերջապէս. «Խտալիան՝ շղթաներէն եւ ստրկութենէն դեռ մահանմլիկ իր բազուկները պէտք է դնէ ի պաշտպանութիւն ժողովրդի մը, որ այսօր՝ երեկի տառապանքներով կը տառապի եւ իր

8 «Դրօշակ», 1906, թիւ 4, էջ 52:

իրաշալի յատկութիւններով ցոյց կու տայ որ մեծապէս արժանի է ազատութեան»⁹: Որքան էլ հայերը պատմութեան ընթացքում կորուստներ են ունեցել, բայց այնուամենայնիւ, յօդուածագիրը լաւատեսօրէն է տրամադրուած հայոց ազդի ապագայի նկատմամբ:

1912 «Դրօշակում» հրատարակուել է «Կրիսպի եւ հայկական խնդիրը» նիւթը, որն առաջին անգամ տպագրուել է Հռոմի «La Tribuna» պարբերականի մէջ (նոյն թուականի Սեպտեմբեր 23ին) նուիրուած հայոց հարցին: Գեներալ-զօրավար պատգամաւոր Պեռոռուկետտին հանդէս գալով իտալական խորհրդարանում, ըերում է հոչակաւոր վարչապետ Ֆրանչեսկոյ Կրիսպիի մի նամակը (գրուած 1897 Փետրուար 3ին) նուիրուած նոյն հարցին: Ֆ. Կրիսպին իտալիայի ազգային հերոս Զուգեպահէ Գարդիբալդիի «Հազարեակի» արշաւանքի մասնակից, 1887-1891 եւ 1893-1896 իտալիայի վարչապետ, կոչտ կուրսի կողմանկից թէ՝ արտաքին թէ՝ ներքին քաղաքականութեան մէջ, իտալական Բիսմարկն էր: Ֆ. Կրիսպի իր նամակում նշաւակում է եւրոպական մեծ պետութիւնների դիրքը 1894-1896 հայկական կոտորածների վերաբերեալ: «Հայկական սարսափները գերազանցեցին բուլգարականին, բայց Բուլգարիան գտաւ իր ազատարար ցարը»¹⁰: Ֆ. Կրիսպին նաեւ այն միտքն է զարգացնում, որ իտալիան միաւորումից յետոյ պէտք է հզօրանայ եւ բարգաւաճի, որ օգնութեան հասնի ու ազատութիւն նուաճի թուրքիայում ապրող փոքրամասնութիւնների, այդ թւում եւ հայերի համար: Եւ նա հաւատում է, որ գալու է այդ օրը:

Գեներալ-զօրավար Պեռոռուկետտին յիշում է թուրքերի կողմից հայոց Աղանայի ջարդերը՝ 1909, այնուհետեւ մէջբերում է կատարում իտալացի հանրաճանաչ բանաստեղծ Կարդուչչի մի կոչը թուրքական հալածանքների եւ հայոց աղէտների վերաբերեալ, եւ այն եղրակացութեանն է յանգում, որ «Կրիսպիի գուշակած բաղձալի օրը հասել է արդէն, որ իտալիան պէսի է ձայն բարձրացնի ի նպաստ Հայաստանի»¹¹: Ֆ. Կրիսպիի այս նամակն իր բովանդակութեամբ յիշեցնում է «Դրօշակում» տպագրուած Վիտորիո Դի Օլիւիէրիի «Հայկական հարցը եւ իտալիոյ պարտականութիւնը» յօդուածը, որ նոյնպէս նուիրուած էր նոյն հիմնահարցին: Սակայն յիշեալ ժամանակաշրջանում իտալիան հզօ-

9 Ա.Յ., էջ 52-53:

10 «Դրօշակ», 1912, Յուլիս-Օգոստոս ամիսներ, թիւ 7-8, էջ 216:

11 Ա.Յ.:

բացել էր, բայց եւայնպէս չկարողացաւ օգնութեան հասնել իրեն պատմական ճակատագրով մօտ կանգնած հայերին:

1914 «Դրօշակը» իտալական ազգային-ազատագրական շարժմանը վերաբերող մասերում քննարկում է «Յուլիանում» իտալիայում» յօդուածը (Հեղինակ Մ. Վ.- Միքայէլ Վարանդէան) սկսելով Անկոնայի ընդհարումից, որտեղ բախուեցին ոստիկանները եւ ցուցարարները: Դրա հետեւանքով Յ մարդ զոհուեց, սակայն արձագանքը տարածուեց երկրով մէկ ու իտալական շատ քաղաքներում սկսուեցին ցոյցեր: Ողջ «Իտալիան բռնուեց ըմբռատացման երդեհով»¹²: Այս առիթով ցոյցեր տեղի ունեցան Հռոմում, Նապոլիում, Միլանում, Թուրինում եւ այլուր, ուր կառուցուեցին պատմէշներ, կոիւները թէժացան ու ցոյցի մասնակից հարիւրաւոր մարդիկ վիրաւորուեցին: Աւելի վճռական էին Անկոնա քաղաքի աշխատաւորների կոիւները, ուր հասարակ իտալացի աշխատաւորները պայքարում էին իրենց իրաւունքների պաշտպանութեան համար:

Յօդուածագիրը շարունակելով գարգացնել իր միտքը յիշատակում է երկու իտալացի նշանաւոր յեղափոխականների, «մինը ընկերվարական-սեղիկալիստ, միւսը կարմիր անիշխանական, մինը պարլամենտում, միւսը Անկոնայի մէջ, - Արքուրո Լարրիոլա եւ էրրիկո Մալատեստա»¹³: Յիշատակում է նաեւ, որ այս գործիչներից վերջինս էր, որ գլխաւորեց Անկոնայի ցոյցը: Եւ այս երկուսին «Քաջալերում» եւ հովանաւորում էր հոչակաւոր Ամիլկարէ Ջիպրիանին՝ «հին մեծանուն գարիբալդիան ուազմիկը», որ չնայած ընտրուել էր իտալական խորհրդարանի պատգամաւոր, բայց մնում էր արտասահմանում՝ Փարիզում, իտալական կառավարութեան դէմ քաղաքական հայեացքների անհամաձայնութեան համար, եւ ամէն անգամ եւրոպայի ու իտալիայի, Հռոմի, Ջենովայի, Միլանի, Թուրինի յեղափոխականներին փողհարում էր ոտքի կանգնելու եւ «քօթափելու միապետութեան ու կապիտալիզմի լուծը»¹⁴: Եւ այս առիթով պարբերականում պատկերուած է «հին մեծանուն գարիբալդիականի» լուսանկարը:

Պարբերականը համեմատում է Ա. Ջիպրիանիին հունգար նշանաւոր յեղափոխական Լյուդուիդ Կոշուտի հետ. վերջինս էլ

12 «Դրօշակ», 1914, թիւ 5-6, էջ 88:

13 Անդ:

14 Անդ, էջ 90:

իր գաղափարների համար հալածուեց իր հայրենիքում եւ երկար տարիներ ապրում էր Փարիզում:

Միքայէլ Վարանդեանը գտնում է, ինչպէս Լ. Կոչուտի դէպքում, նոյնպէս էլ Ա. Չիպրիանիին «շուտով կը եխրընկալէ չազատագրուած հայրենիքը»։ Սա փաստօրէն Ա. Չիպրիանիին իր ժողովրդի հանդէպ ունեցած գործի բարձր գնահատականն էր, որը տրւում էր Խտալիայի պատմութեանը քաջատեղեակ, աւելի ուշ 1918-1920 Հայաստանի Ա. հանրապետութեան, Խտալիայում հայոց հիւպատոս Միքայէլ Վարանդեանի կողմից (1860-1934)։

Պարբերականում տպագրուած յօդուածը վերնագրուած էր «Գարիբալդեանները»։

Երբ սկսուեց Առաջին համաշխարհային պատերազմը Խտալիայի Ազգային հերոս Ջուզեպպէ Գարիբալդիի թոռները իրենց կարմիր շապիկները հագած, որը ժառանգել էին պապից, կռւում էին ֆրանսիական բանակում պաշտպանելով «մարդկային սրբազնագոյն իդէալները»։ Գարիբալդեան լեգէոնի մէջ հերոսաբար կռւում էին Ռիչչիոտտի Գարիբալդիի զաւակները, Ջուզեպպէ Գարիբալդիի վեց թոռները։

Գերմանական դիրքերից մէկի գրաւման ժամանակ ընկաւ Բրունոյ Գարիբալդիին «սրբազն գերդաստանից», դառնալով գերման գնդակների զոհ։

Յօդուածում ներկայացւում է, որ ֆրանսիական մարտադաշտերում (ըստ հեռագրերի ծանուցման) ընկաւ միւս նշանաւոր գարիբալդիականը, Բրունոյ Գարիբալդիի եղբայրը՝ Կոստանդինո Գարիբալդին։ Այս երկու երիտասարդ գարիբալդիականների մահը խոր յուզմունք առաջացրեց թէ՛ Ֆրանսիայում, թէ՛ Անգլիայում եւ այլուր։ Աշխարհի բոլոր ծայրերից Հռոմ ցաւակցական հեռագրեր ուղարկուեցին Ռիչչիոտտի Գարիբալդիին։ Հեռագրողների մէջ էր նաև «Դրօշակի» խմբագրութիւնը, որն իր կողմից ցաւակցեց Խտալիայի մեծ զօրավարին։ Այս կապակցութեամբ Հռոմի Զաննիկոլո բլրի մօտ, որտեղ գտնւում էր Խտալիայի Ազգային հերոսի՝ Ջուզեպպէ Գարիբալդիի արձանը, հաւաքուեցին մեծ թուով ցուցարարներ, ի յիշատակ երիտասարդ զոհերի։ Ցուցարարները բոլորն էլ գաղափարի մարդիկ էին, ուրոնք եկել էին «Տիեզերական Հերոսի արձանի մօտ» զոհուածների առիթով ծունը էին իջնում եւ մէկ անգամ եւս յարգում գարիբալդեան տոհմի գաղափարակիցների յիշատակը։ «Դրօշակը» գտնում է, «որ դեռ չի կորել, չի փոշիացել իդէալը այս նիւթապաշտաշարի մէջ, որ բիրտ ու գոռող էգոիզմի բարբարոսութեան աշ-

խարհակալող հեղեղների հանդէպ դեռ ծածանւում է գաղափարական անձնազոհութեան դրօշը – գարիբալդիական «Դրօշը»¹⁵: Ինչպէս տեսնում ենք, «Դրօշակը» ներկայացնելով գարիբալդիական տոհմի աւանդոյթները, որոնք հիմնուած են զուտ գաղափարական հենքի եւ իդէալի պաշտելու ուղու վրայ, որը մարդկութեան զարգացման գործընթացն է ապահովում:

1911 «Դրօշակը» հրատարակում է իտալական վերածնունդի (Ուխորջիմենտոյի) 50ամեակին նուիրուած «Հազուագիւտ տօն» (Մի ազգի վերածնութիւնը) վերնագրով յօդուածը: Ի՞նչ հարցեր էր առաջ քաշում այս յօդուածում:

Թուրինը, Հոռոմը, Ֆլորենցիան՝ իտալիայի պատմական մայրաքաղաքները, այսօր ողջ աշխարհի առջեւ պարզում են «իրենց հանճարների գեղեցիկ արդասիքը»: Միքէլանջելոյի եւ Դանթէի «վշտահար ուրուականները» սաւառնում են այդ հանդէսների վրայ, Մաձինիի եւ Գարիբալդիի «կարմրավառ էմրլեմների հետ միասին»: Յօդուածագիրը նկատում է, որ այս բոլորից յետոյ «Ապենինեան թերակղզին՝ հայրենասիրական գինովութեան մեջ է»¹⁶:

Հեղինակը ներկայացնում է, որ 50 տարի առաջ իտալիայում «Հրաշք» կատարուեց:

Իտալական Վերածնունդի ամենագնահատելի կողմն այն էր, որ համաշխարհային թատերաբեմում ստեղծուել էր մի ազգ, մի միասնական լեզուով, բարքերով ու սովորոյթով: Նրանց միջեւ այլեւս վերացել էր այլատարր բեկորները, հատուածային առանձնայատկութիւնները, բարբառները: Իտալացի «տիեզերահռչակ» Դանթէի «Աստուածային կատակերգութիւն»ում ողբացող եւ դժոխքի դրութեանը հասնող երկիր այլեւս չկար: ԺԹ. դարում իրար հետ միաւորուեցին Սիցիլիան, Նէապոլը, Հոռոմը, Ֆլորենցիան, Պիզան, Վենետիկը, Ջենովան եւ Թուրինը:

Իտալիայի բնութեան առանձնայատկութիւնն էլ նպաստում էր այդ երկրի ծայրայեղ կտրտուածութեանը: Մինչեւ միաւորումը, Իտալիայի այդ մասերի միջեւ ստեղծուել էին անջրպետներ: Ազգային գիտակցութիւնը դեռ գտնուում էր կազմաւորման ընթացքի մէջ:

Յօդուածագիրը համեմատութեան եզրեր է փնտուում հին իտալերէնի եւ գրաբարի միջեւ: Եւ նկատում է, որ հին իտալե-

15 «Դրօշակ», 1914, թիւ 9-12, էջ 131:

16 «Դրօշակ», 1911, թիւ 3-4, էջ 52:

րէնով գրում էին քիչ թուով մտաւորականներ, լեզուն գործնական չէր: Հեղինակն իրաւացիօրէն նկատում է, որ լեզուի եւ ազգային հոգեբանութեան միջեւ շատ ընդհանրութիւններ կան: Եւ դրանից էլ բխում է ազգային միասնութեան գաղափարը: Ժթ. դարի առաջին կէսում այս վսեմ գաղափարները «առանձնաշնորհեալների» սեփականութիւնն էր: Բայց յանկարծ յայտնւում են «հերոսների ու տաղանդների հանդիսաւոր բոյլը»՝ Մաճճինին, Գարիբալդին եւ Քաւուրը: Նրանք մաքառում են եւ յաղթանակի հասնում: Երբ մտնում ենք Ջենվայի համալսարան մուտքի պատին Մաճճինիի վերաբերեալ մի արձանագրութիւն է պահպանուել: «Դու կամեցար – եւ իտալիան եղաւ»:

Ժթ. դարի 40ականներին անգամ չէր կարելի խօսել «այդ տիսուր Բարելոնում» միութեան եւ ազգային գիտակցութեան վերաբերեալ: Բայց դրան հաւատում էին մի բուռ մաճճինիականները: Նրանք ժողովրդին առաջնորդեցին եւ առաջ ընթացան, իրենց հետեւից տարան յեղափոխական զանգուածներին ու յաղթանակեցին: Պայքարի գաղափարները գալիս էին դեռեւս բանաստեղծներ Պետրարկայի եւ Դանթէի ժամանակից:

Իրօք այս երկրում հրաշք է կատարուել «միութիւնը կատարեալ է ամենուրեք. մեկ ազգ է, մեկ հայրենիք, մեկ հասարակական ու կուլտուրական գերդաստան»¹⁷:

Եւ հեղինակը հարց է տալիս «ի՞նչ է յիսուն տարին մի ժողովրդի զարգացման պատմութեան մէջ»¹⁸: **Իրօք**, 50 տարին կարճ ժամանակամիջոց է, բայց այդ Մըջանում իտալիայում «իրաշք» է կատարուել, ստեղծուել է իտալական պետականութիւնը, որի շնորհիւ երկիրը նորից վերածնուել ու համընթաց կերպով ընթանում է երրոպայի քաղաքակիրթ ազգերի ուղիով: Այս բոլոր հարցերը, որոնք առաջադրւում էին յօդուածում, լեզուի հնի եւ նորի, երկրի մասնատուածութեան ու միաւորման, ազգային ունորի, երկրի մասնատուածութեան հարցեր, ինչ-որ տեղ էլ համահունչ էին նաեւ հայ իրականութեան հետ: Ահա թէ որն էր նման բնոյթի նիւթի տպագրման նպատակը:

ՀՐԱՉԵՍՅ Ա.ՍՄԱՐԵԱՆ

17 Ա.նդ., էջ 53:

18 Ա.նդ., էջ 54:

Summary

A REFLECTION OF THE ITALIAN NATIONAL LIBERATION MOVEMENT IN THE «DROSHAK» DAILY

HRACHYA ASMARYAN

The Droshak daily newspaper was the organ of the Armenian Revolutionary Federation. It was founded by the famous Federal Revolutionary member Christopher Mikaelyan (1859-1905).

Many interesting materials concerning the Armenian question were published in the paper, as well as articles about the events which took place in Italy during the same period.

From 1899 to 1901, the Union of Armenian Students in Europe wrote to the two famous Garibaldians, Ricciotti Garibaldi and Amilcare Cipriani to ask their opinion about the Armenian question. The Italian heroes answered the letters of the Armenian students with great pleasure, calling on the Armenian people to struggle for freedom from Turkey, even offering their help. But this offer was not followed up with any specific activity.

In 1907, on the occasion of the centennial anniversary of Giuseppe Garibaldi's birth, «Droshak» published two articles about the hero's life and activities. More articles about the Armenian question were also published. An article called "Garibaldians" described the struggle by Garibaldi's two grandsons, Bruno and Costantino, against German forces during World War I. Both of them were killed in the fight for France.

In 1911, Droshak published an article called "Rare Holiday" (the revival of a nation), where it stated that 50 years was usually too short a period for a nation's revival. But a «miracle» had happened in Italy during that period, and with its help the Italian statehood had been created. The country had once again risen to life and found its place in the European world.